ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ Մ. Թ. Ա. VI–IV ԴԱՐԵՐՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Հայագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, թե Հայաստանի տարածքում են գտնվել XIII և XVIII սատրապությունները[1]: Սակայն կա նաև հիմնավոր տեսակետ, համաձայն որի Հայաստանը բաժանված չի եղել XIII և XVIII սատրապությունների և, որ վերջինս տարածվել է Կուր գետի և Կովկասյան լեռների միջև[2]: Լիովին կիսելով այն տեսակետը, թե Հայաստանն ամբողջությամբ մտել է XIII սատրապության մեջ, փորձենք սկզբնաղբյուրների համակողմանի և համադրական քննությամբ ճշգրտել Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները Աքեմենյան տիրապետության շրջանում:

Սկզբնաղբյուրների մեջ իր ուրույն տեղն ունի Հերոդոտոսի «Պատմություն»-ը, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում խնդրո առարկայի վերաբերյալ: Պատմիչը գրում է. «Պակտյուիկեից[3], արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր»[4]: Քննությունը սկսենք Պակտյուիկեից և փորձենք պարզել, թե ի՞նչ երկիր կամ շրջան է Պակտյուիկեն: Պատմիչը Պակտյուիկե անունով երկիր և պակտյուացիներ (Πάκτυες) անունով ժողովուրդ հիշատակում է ներկայիս Աֆղանստանի տարածքում[5]:

Ուսումնասիրողներից Պակտյուիկե երկրի տեղադրության վերաբերյալ ուշագրավ տեսակետ է առաջադրել Բ. Հարությունյանը: Վերջինիս քննության համաձայն, մ. թ. ա. 625 թ. հետո Արամ-Արամանի-Էրիմենան գրավում է Կապադովկիայի արևելյան շրջանները, որոնք այդ վաղնջական ժամանակներում «Պատուկա» կամ թերևս «Պակտուկա» էին կոչվում և

---

[1] *Այս մասին կա մեծաքանակ գրականություն, որից նշենք երկուսը. Գ. Ա. Տիրացյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դար).– ՊԲՀ, 1980, № 4, էջ 84-95. Նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ– մ. թ. ա. III դ. վերջ).– ՊԲՀ, 1981, № 2, էջ 68, 84:*

[2] *Բ. Հ. Հարությունյան. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ.– «Հանդես ամսօրյա», 1999, էջ 45-112.*

[3] ἀπὸ Πακτυϊκῆς, *մյուս ձեռագիր ընթերցումը* Πακτυκίης *(տե՛ս* А. И. Доватур, Д. П. Каллистов, И. А. Шишова. Народы нашей страны в «Истории» Геродота. М., 1982, с. 96, 195, прим. 94).

[4] *Հերոդոտոս. Պատմություն ինը գրքից (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի). (այսուհետև՝ Հերոդոտոս), Երևան, 1986, III, 93:*

[5] *Նույն տեղում, III, 102, IV, 44, VII, 68: Պակտյուացիների հետ կապված նշենք, որ Քսերքսեսի բանակում կռվող ժողովուրդների թվում հիշատակվող արմենները հանդես չեն դալիս, այսպես կոչված, պակտյուացիների հետ, իսկ սատրապությունների ցուցակում, ընդհակառակը, չկա Աֆղանստանի տարածքում գտնվող Պակտյուիկեն:*

նույնանում էին Մովսես Խորենացու «Պռոտին Արմենիա»-ին[6]: Հենվելով սույն տեսակետի վրա, փորձենք պատասխանել մեր իսկ կողմից առաջադրված մի քանի հարցադրումների, որոնք ժամանակագրական առումով կապվում են ավելի ուշ շրջանի պատմաաշխարհագրական իրողություններ հետ և արտացոլում են մ. թ. ա. VI-IV դդ. իրադրությունը:

Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների քննության համար դիմենք պարսից «արքայական ճանապարհի» երթուղու այն հատվածի քննությանը, որն անմիջականորեն առնչվում է Հայաստանին և նրան հարևան երկրներին: Հերոդոտոսի վկայությամբ Փռյուգիայից հետո «Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակակետ: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է (ընդգծումը մերն է – Խ. Հ.), անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց ու կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան իջևանատներով, այնտեղ կա նաև պահակակետ: Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսունչորս կայան, հարյուր երեսունյոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունգես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների: Այս երկիրն անցնելուց հետո ճանապարհը մտնում է Կիսսիյան երկիրը...»[7]: Այս վկայության մեջ հանդիպող ժողովուրդները հիշատակվում են նաև մեկ այլ կապակցությամբ, երբ Միլետի տիրան Արիստագորասը ցույց է տալիս պղնձե տախտակի վրա փորագրված երկրի ուրվագիծը և հերթով մատնանշում այն ժողովուրդներին, որոնք բնակվել են իրար հարևանությամբ: Հոնիացիներից հետո նշվում են լյուգիացիները, որոնցից հետո «դեպի արևելք բնակվում են փռյուգները, որոնք ինձ հայտնի բոլոր մարգկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ՝ Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր

---

[6] Ի. Հ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII–VI դդ.), Երևան, 1998, էջ 78-79: Կարևոր է նաև Մովսես Խորենացու այն տեղեկությունը, որ Տիգրանը գորք է ժողովում նաև «ի սահմանացն Կապադովկացւոց»: Սա կարող է վերաբերել միայն Տիգրան Երվանդյանին (տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մովսես Խորենացի). աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, գիրք Ա, գլ. իթ):

[7] Հերոդոտոս, V, 52:

ունեն. արմեններից հետո, ահա այստեղ, բնակվում են մատիենները: Հաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա դանձերը»[8]:

IV կամ Կիլիկյան սատրապության արևմտյան սահմանը ճշգրտվում է բավական հեշտությամբ, քանի որ վերջինս այդ ուղղությամբ սահմանակից էր I սատրապությանը[9] *և երկու սատրապությունների միջև ընդհանուր սահմանը եղել է Կիլիկյան Տավրոսի ծայր արևմտյան հատվածը: Կիլիկյան սատրապության բնական սահմանը հյուսիսում Կիլիկյան Տավրոսն էր և Անտիտավրոսի հարավային լեռնաճյուղերը: Ինչպես նշում է Հերոդոտոսը, հարավում Կիլիկիայի և Սիրիայի սահմանը Պոսիդեյոն քաղաքն էր*[10]*, որը Լաոդիկեայից հյուսիս գտնվող Պոսիդիումն է՝ Կասիոս լեռից (Ճեպել Աքրա) հարավ: Բավականին հակասական և կցկտուր են պատմիչի տեղեկությունները Կիլիկյան սատրապության հյուսիսարևելյան սահմանների մասին (տե՛ս վերևում V, 49, V, 52 վկայությունները): Մոտավորապես պարզելով Կիլիկյան սատրապության սահմանները, այժմ տեսնենք, թե ինչ տարածք է ընդգրկել Կապադովկիան, որը հարցիս քննության համար կարևոր նշանակություն ունի: Հերոդոտոսի հավաստմամբ, կապադովկիացիները այլ ազգերի հետ կազմել են առանձին սատրապություն. «Դեպի ներս նավարկելիս աջակողմյան հելեսպոնտոսցիներից, փռյուգիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիններից և սիրիացիներից (իմա՛ կապադովկիացիներ – Խ. Հ.) (ստացվող) հարկը երեք հարյուր վաթսուն տաղանդ. այս նահանգը երրորդն էր»*[11]*: Քսերքսեսի հունական արշավանքին այս սատրապության ազգերը մասնակցում են հետևյալ կերպ. «Պափլագոնացիներն արշավում էին ղլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը: Լիգիացիների, մատիենների, մարիանդինների և սիրիացիների (իմա՛ կապադովկիացիներ – Խ. Հ.) հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիեններին առաջնորդում էր Դոտոսը, Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիդիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտյուստոնեի որդի Գոբրյուեսը: Փռյուգացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր գրանից... Արմենները ևս, լինելով փռյուգիական վերաբնակիչներ, զինված էին փռյուգների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Դարեհի գստեր հետ»*[12]*: Կապադովկիացիները սիրիացիներ են անվանվում նաև մեկ այլ հատվածում. «Կապադովկիացիներին հելլեններն անվանում են սիրիացիներ: Այս սիրիացիները նախքան պարսկական տիրապետութ-*

---

[8] *Նույն տեղում, V, 49:*
[9] *Նույն տեղում, III, 90:*
[10] *Նույն տեղում, III, 91:*
[11] *Նույն տեղում , III, 90:*
[12] *Նույն տեղում, VII, 72, 73:*

յունը հպատակ էին մեդացիներին, իսկ այդ ժամանակ՝ Կյուրոսին»[13]: *Նաև «Հալյուս գետը հոսում է հարավից հյուսիս, սիրիացիների (իմա՝ կապադովկիացիներ – Խ. Հ.) և պափլագոնացիների երկրի միջով և դուրս գալիս Եվքսինոս կոչված Պոնտոսը»*[14]:

Կապադովկիայի Պտերիա կոչված վայրը գտնվել է Սինոպե քաղաքին մոտ[15], *ուրեմն նրանք տարածվել են Հալիսից արևմուտք: Հերոդոտոսի տեղեկություններից մեկի համաձայն, սիրիացիներն ապրել են Թերմոդոնտ և Պարթենիոս (ներկայիս Կոջա-Իրմակը) գետերի մոտ*[16]: *Կապադովկիացիները տարածվել են Պափլագոնիայից արևելք: Ըստ Հերոդոտոսի, Սինոպեն գտնվել է Պափլագոնիայի կազմում*[17]: *Ըստ Ստրաբոնի, Հալիսը պափլագոնացիների և լևկո-սիրիացիների սահմանն էր, որոնց պատկանում էր Ամիսոսը*[18]: *Պլուտարքոսը գրում է, որ Սինոպեն պատկանել է սիրիացիներին*[19]: *Դատելով Ստրաբոնի տեղեկություններից, սիրիացիները միաժամանակ բնակվել են Սինոպեում և դրա շրջակայքում*[20]: *Սկզբնաղբյուրների տարաբնույթ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Հալիսը Պափլագոնիայի և Կապադովկիայի համար հանդիսացել է վարչական և ոչ թե էթնիկական սահման և երկու կողմից էլ հնարավոր էին էթնիկական փոխներթափանցումներ՝ Հալիսից արևելք և արևմուտք: Հեկատեոսի մոտ պահպանվել է կարևոր տեղեկություն. «Խադիսիան լևկո-սիրիացիների քաղաքն է» և «Թեմիսկյուրեն դաշտ է Խադիսիայից մինչև Թերմոդոնտ»*[21]: *Ըստ Ստրաբոնի, Թեմիսկյուրեի դաշտը գտնվել է Թերմոդոնտ և Իրիս գետերի միջև, ծովափից մինչև Պոնտական լեռներ: Թեմիսկյուրեին արևելքից սահմանակցել է Սիդենեն (Պոլեմոնիոն, ներկայիս Բոլամանը)*[22]: *Համեմատելով Ստրաբոնի վկայությունը Հեկատեոսի տեղեկությունների հետ՝ կտեսնենք, որ Խադիսիան պետք է տեղադրվի Իրիս գետից արևմուտք, հակառակ դեպքում, եթե տեղադրենք Թերմոդոնտից արևելք, ապա Իրիսի և Թերմոդոնտի միջև ընկած տարածքը կհայտնվի Թեմիսկյուրեի հարթավայրից դուրս, որը հակասում է Ստրաբոնի տվյալներին: Մեզ համար կարևորն այն տեղեկությունն է, որ Կապադովկիան հյուսիս-արևելքում հասել է մինչև Թերմոդոնտ գետը: Պոմպեոս Տրոգոսի վկայությամբ Կապադովկիան նույնպես հասել է մինչև Թերմոդոնտ*[23]: *Դրանց գալիս է ավելանալու մի շատ արժեքավոր տեղեկություն: Համաձայն Էսքյուլոսի Աքո-*

---

[13] *Նույն տեղում, I, 72:*

[14] *Նույն տեղում, I, 6:*

[15] *Նույն տեղում, I, 76:*

[16] *Նույն տեղում, II, 104:*

[17] *Նույն տեղում, I, 6, 72:*

[18] С т р а б о н. География в 17 книгах (перевод, статья и комментарии Г.А. Стратановского). Л., 1964, XII, III, 9, 12.

[19] П л у т а р х. Лукулл. XXIII. – Избранные жизнеописания, том II, М., 1987.

[20] S t r a b o, XII, III, 5:

[21] В. В. Л а т ы ш е в. Известия древних писателей о Скифии и Кавказе (*այսուհետև՝* ИДПСК). – "Вестник древней истории" (*այսուհետև՝* ВДИ). 1947, № 1, с. 301:

[22] S t r a b o , XII, III, 15, 16.

[23] ИДПСК. – ВДИ,1949, № 1, с. 251.

լիաստի, Թեմիսկյուրեն, Էսքյուլոսի մոտ, Հայաստանում գտնվող վայրի կամ դետի անուն է: Ըստ Սքոլիաստի, քաղաք է Սկյութիայում[24]: Որպես դետ Թեմիսկյուրեն Թերմոդոնտն է, իսկ որպես Սկյութիայի քաղաք, նկատի ունենանք, որ XIX սատրապության տաբածքը և ցեղերը անտիկ հեղինակների կողմից ընդհանրապես ընկալվել են Սկյութիա:

Աղբյուրների հավաստմամբ, Թերմոդոնտը սկիզբ է առել Հայկական լեռնաշղթայից (Ամազոնական լեռներից)[25]: Ըստ Ապոլլոնիոսի «Արգոնավորդների արշավը» սքոլիայի, Մետրոդորոս Ակեպսիացին հաղորդում է, որ Թերմոդոնտը կոչվել է Արաքս[26]: Հետևաբար, դժվար չէ եզրակացնել, որ Կապադովկիայի սահմանը հյուսիս-արևելքում եղել է Թերմոդոնտը, որից արևմուտք արդեն սպիտակ ասորիների կամ կապադովկիացիների հողերն էին: Հարավում կապադովկիացիները չեն տարածվել Հալիսից հարավ: Սակայն, ինչպես կտեսնենք ստորև, արդեն մ. թ. ա. V դ. Կապադովկիան հարավային ուղղությամբ տարածվել էր Հալիսից բավականաչափ հարավ և հարավ-արևելք:

Մեր կարծիքով, պատմահայր Հերոդոտոսի մի շատ կարևոր տեղեկությունը կարող է լուրջ թյուրիմացությունների տեղիք տալ, եթե ճիշտ չընկալվի և չքննարկվի կոնկրետ մ. թ. ա. V դ. իրողության համատեքստում: Այսպես, նա գրում է. «Մեդական տերության և լյուդիական տերության միջև սահմանը Հալյուս դետն էր, որը հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով (ընդգծումը մերն է – Խ. Հ.), այնուհետև (հոսում է) աջից մատիեններին և ահյակից փռյուգիացիներին ունենալով: Անցնելով այս երկրները և հոսելով վեր, դեպի հյուսիս, այն բաժանում է կապադովկյան սիրիացիներին աջում, պափլագոնացիներից՝ ձախում: Այսպիսով, Հալյուս դետը կտրում է Ասիայի ամբողջ ստորին մասը՝ Կիպրոսին հանդիպակաց ծովից դեպի Եվքսինյան Պոնտոսը: Սա այդ ամբողջ երկրի (ամենանեղ) պարանոցն է և լավ քայլող մարդուց այդ ճանապարհը հինգ օր կխլի»[27]. Պատմագիտական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, թե կիլիկեցիները բնակվել են Կեսարիա-Մաժակի շրջանում[28]: Սակայն, ինչպես տեսանք, մեջբերված հատվածում, խոսվում է ոչ թե կիլիկեցիների, այլ Կիլիկիայի մասին, որն աշխարհագրորեն լիովին տարբերվում է Կիլիկիա սատրապությունից և ոչ մի հիմք չկա Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիսում հասցնել այդքան հեռու: Հերոդոտոսի տվյալ վկայությունում Կիլիկիան աշխարհագրական և վարչական առանձին միավոր է, որն իրապես տարածվել է Կեսարիա-Մաժակի շրջանում: Այս իրողությունից հրաժարվել կամ անտեսել նշանակում է ճիշտ չըմբռնել նաև պատմահոր մնացած վկայությունները, որոնք տրամաբանական ամբողջություն են կազմում: Հերոդոտոսը «արքայական ճանապարհի» մասին դրելիս նշում է, որ ճանապարհի մի հատվածը Կապադովկիայից հետո շարունակվել է Կիլիկիայով և Կիլիկիայով (IV կամ Կիլիկյան սատրապության) անցնող

---

[24] ИДПСК. – ВДИ, 1947, № 1, с. 307.
[25] ИДПСК. – ВДИ, 1949, №4, с. 242, 303.
[26] ИДПСК. – ВДИ, 1947, № 3, с. 293.
[27] *Հերոդոտոս, I, 72:*
[28] Н. В. Хазарадзе. Гекатеевы матиены. – ВДИ, Тбилиси, 1973, с. 113.

հատվածն ունեցել է ընդամենը 15,5 փարսախ (շուրջ 90 կմ) երկարություն: Փաստորեն, եթե մենք ևս մի պահ ընդունենք, որ Կապադովկիան և Կիլիկիան սահմանակցել են Կեսարիա-Մաժակի շրջանում, ապա այս դեպքում լիովին կանտեսենք պատմահոր այն շատ հստակ ցուցումը, որ ճանապարհը Կիլիկիայից հետո մտել է Հայաստան և ամենակարևորը՝ Եփրատը եղել է Կիլիկիայի և Հայաստանի սահմանը: Հետևաբար, ճանապարհի Կիլիկյան սատրապությունով անցնող հատվածի մեկնակետը, եթե սկսենք Կեսարիա-Մաժակից, ապա հատվածի այդ փոքր երկարությունը (շուրջ 90 կմ) ոչ մի դեպքում չի հասնի Եփրատ: Սակայն պարսից «արքայական ճանապարհի» երթուղին ուղեղծելու համար ուսումնասիրողները կատարել են կամայական պատմաաշխարհագրական վերաձևումներ: Այսպես, որոշ ուսումնասիրողներ, այդ թվում և Հ. Մանանդյանը, հենվելով Հերոդոտոսի տեղեկության վրա (V, 52), Մելիտինեն համարում էր Կիլիկիայի մաս[29]՝ դրանով Կիլիկյան սատրապությանը հյուսիս-արևելքում հատկացնելով ահռելի տարածքներ:

Ընդհանրապես, պարսից տերությանը նվիրված պատմաաշխարհագրական քարտեզներում «արքայական ճանապարհի»՝ Կապադովկիայով անցնող հատվածի կարևոր կայաններից մեկը նշված է Պոնտոսի Կոմանան, որտեղից ճանապարհն անցնում էր Հալիսը և հասնում Մելիտինե, որը Կիլիկիայի մասն էր համարվում: Ճանապարհի նման երթուղու դեպքում Հայաստանը, փաստորեն, զրկվում էր Եփրատից արևմուտք ընկած իր տարածքներից (հետագա Փոքր Հայքի տերիտորիան), որը լիովին հակասում է Հերոդոտոսի այն տեղեկությանը, թե Հալիսը հոսում է Հայկական լեռներից: Ճիշտ է, Հայաստանը մ. թ. ա. V դ. գոնե վերջերին զրկվել էր իր սևծովյան տիրույթներից, բայց պահպանում էր Գայլ գետի և Հալիսի վերին հոսանքի շրջանները: Այս պարագայում, Մելիտինեն, բնականաբար, չի կարող դիտվել որպես Կիլիկիայի մաս: Սրան գումարվում է պատմահոր այն կարևոր նշումը, որ Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է, անունը Եփրատ: Սա ուղղակիորեն բերում է այն եզրահանգման, որ երկու երկրները պետք է սահմանակցեին մի այնպիսի հատվածում, որտեղ Եփրատ գետի հոսանքը նավարկելի էր: Իսկ Մելիտինեի մոտ գետը նավարկելի չէ, քանի որ այստեղ բազմաթիվ սահանքներ և ջրվեժներ կան: Բացի այդ, եթե Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիս-արևելքում հասներ այդքան հեռու, ապա հին Հայաստանի կարևոր երկրամասերից մեկը՝ Կոմագենեն, կհայտնվեր Կիլիկիայի կազմում, և իրերի նման վիճակը տրամաբանորեն լիովին անհարիր կլիներ մ. թ. ա. III դ. պատմական իրականությանը: Հակառակ դեպքում պետք է անտեսել այն կարևորագույն փաստը, որ մ. թ. ա. III դ. Ծոփքն ու Կոմագենեն կազմում են առանձին պետություն, իսկ Կոմագենեի թագավոր Անտիոքոս I-ը իր նախնիներին համարում է Հայաստանի տիրակալներ (Օրոնտես-Արոանդես-Երուանդ)[30]: Ենթադրել, թե Ծոփքը Կոմագենեն գրավել է Կիլիկիայից, որը տվյալ դեպ-

---

[29] Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 63-64:

[30] Г. Тирацян. Страна Коммагена и Армения. — "Вестник общественных наук", АН АрмССР, №3, с. 71—73.

քում կնշանակի Սելևկյաններից, պարզապես անհնարին է: Պետք է, անշուշտ, նկատի ունենալ, որ «արքայական ճանապարհը» Հայաստանում երբեք չի հատել Տիգրիսը, իսկ Մելիտինեից հարմարեցնելու դեպքում ճանապարհն անպայմանորեն կհատեր Տիգրիսը, որը, սակայն, հնարավոր չէր, քանի որ Տիգրիսի դետանցումը, ըստ սկզբնաղբյուրի, կատարվել է Մատիենե երկրում (իմա՛ Ասորեստան): Ընդունելով հանդերձ, որ Հերոդոտոսի արգեն մեջ բերված վկայությունում (I,72) Կիլիկիան տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և ոչ մի կապ չունի IV կամ Կիլիկյան սատրապության հետ, այն աշխարհագրական առումով նույնանում է մ. թ. ա. VII դ. վերջերին Արամ-Արամանի-Էրիմենայի գրված Պատուկա-Պակտյուիկե երկրին: Հերոդոտոսի «արքայական ճանապարհի» մասին տեղեկությունը արտացոլում է շուրջ մ. թ. ա. V դարի կեսերի իրողությունը: Հետևաբար պիտի ենթադրել, որ մ. թ. ա. V դ. Հայաստանի սատրապությունը կորցրել էր Պատուկա-Պակտյուիկեն, և, իրոք, Կեսարիա-Մաժակն «արքայական ճանապարհի» գլխավոր հանգուցակետերից մեկն էր, սակայն արդեն III սատրապության մեջ: Կապադովկիայի տարածական ընդարձակումը կարելի է տեսնել Քսերքսեսի հունական արշավանքի սկզբին: Այսպես, եթե սատրապությունների հերոդոտյան ցուցակում լիգիացիները, որոնք, մեր կարծիքով, թերևս հենց նույն լիկաոնիացիներն են, չեն հիշատակվում, ապա Քսերքսեսի հունական արշավանքի կապակցությամբ հանդես են գալիս մարիանդինների և սիրիացիների (իմա՛ կապադովկիացիներ – Խ. Հ.) հետ մեկ հրամանատարության տակ: Կապադովկիայի տարածական ընդլայնման մասին գրում է նաև Քսենոփոնը: Հույն պատմագրի հավաստմամբ մ. թ. ա. V դ. վերջին Կապադովկիան ձգվել է մինչև Դանա[31] (Տիանա), և Լյուկաոնիան ու Կապադովկիան կազմել են մեկ վարչական միավոր, որի տիրակալն էր Միթրադատեսը[32]:

Պարսից արքունիքը մ. թ. ա. V դ. կեսերին մեզ անհայտ ինչ-ինչ պատճառներով կատարել էր վարչական վերաձևումներ: Հարավային ուղղությամբ ընդարձակել էր Կապադովկիայի սահմանները, իսկ Սև. ծովի հարավային ափամերձ շրջանները մինչև Կոտիորա[33] մտցրել Պափլագոնիայի մեջ, Պակտյուիկեն էլ Հայաստանի սատրապությունից անցել էր Կապադովկիային: Կեսարիա-Մաժակի շրջանը պետք է ընդգծել նաև այն առումով, որ, փաստորեն, Կեսարիան Հայաստան տանող գլխավոր ճանապարհահանգույցն էր և Կիլիկիայի առևտրական խոշոր կենտրոն Տարսոնից Սև ծով տանող առևտրական մայրուղու կարևոր խաչմերուկը: Ավելի ուշ, Ալեքսանդր Մակեդոնացին, Փռյուգիայի Գորդիոն քաղաքից սկսած, նույնպես հիմնականում շարժվում է «արքայական ճանապարհի» ուղղությամբ. նախ Անկյուրա, Գաղատիայի քաղաքներից մեկը, որից հյուսիս Պափլագոնիան էր, ապա անցնելով Հալիսը՝ Կապադովկիա «դրավեց Հալիս դետի այս կողմը դտնվող հողերն ու ավելի շատ տարածություններ գետի այն

---

[31] *Քսենոփոն. Անաբասիս (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի). Երևան, 1970, էջ 12:*

[32] *Նույն տեղում, էջ 197:*

[33] *Նույն տեղում, էջ 121, 139:*

կողմում»[34]: Ալեքսանդրը, փաստորեն, գրավում է հիմնականում այս ընդարձակ սատրապության արևմտյան և հարավային շրջանները ու չի մտնում Հյուսիսային Կապադովկիա: Հետևաբար, Հալիս գետի այս կողմն ընկած հողերը պետք է տեղադրվեն Տատտա լճից հյուսիս ընկած շրջանում, որը վկայում է մ. թ. ա. IV դ. Կապադովկիայի տարածքային ընդարձակման մասին: Իսկ գետի այն կողմը ցույց է տալիս արդեն Հալիսի ներսում ընկած հողերը: Ալեքսանդրը Կիլիկիա է ներխուժում Կիլիկյան դարպասներից (Գուդլակի լեռնանցք), որտեղ տասնամյակներ առաջ, ինչպես վկայում են Արիանոսը և Ռուփոսը, ճամբար էր խփել Կյուրոս Կրտսերը[35]:

Այսպիսով, վերոշարադրյալ փաստերը բազմիցս հաստատում են, որ սկսած մ. թ. ա. V դ. Կապադովկիայի ընդարձակումը հարավային ուղղությամբ ոչ միայն արդեն վկայված էր աղբյուրներում, այլև, հենց նույն աղբյուրների հավաստմամբ, հասել էր բավականին մեծ չափերի: Պատուկա-Պակտյուիկեն ամբողջովին անցել էր Կապադովկիային, որոնց բնակչությունն էթնիկապես մոտ էր միմյանց: Սկզբնաղբյուրները վկայում են, որ մուշք-փռյուգացիների մի խումբը հաստատվել է Կեսարիա-Մաժակի շրջանում: Այս առումով Բ. Հարությունյանն ուշադրություն է հրավիրում[36] Հովսեպոս Փլավիոսի մի հետաքրքիր տեղեկության վրա. «Եվ մեսքենները, որոնք հաստատվել են Մեսքեսի կողմից և այժմ կոչվում են կապադովկիացիներ. սակայն նրանց հնագույն անվանման ապացույցը բացահայտ է, որովհետև նրանց մոտ կա մի քաղաք, որը մինչև հիմա էլ կոչվում է Մազակա և հասկացողներին թելադրում է ենթադրելու, որ այդպես է կոչվել ամբողջ աղգը»[37]: Ցեղերի և ժողովուրդների ծագումնաբանության մեջ ևս մեսքենները նույնացվում են կապադովկիացիների հետ, որոնց նախահայրը Մոսոքն էր[38]: Հետաքրքիր է, որ Ստրաբոնը ևս Մազական բնութագրում է որպես ցեղի գլխավոր քաղաք, որի բնակիչները կոչվում էին մազակեններ[39]: Կոստանդին Ծիրանածինը նույնպես հաղորդում է, որ Կեսարիան նախապես կոչվում էր Մազակա՝ կապադովկիացիների նախահայր Մոսոխի անունից[40]:

Կատպատուկա-Կապադովկիա անունը, հնարավոր է, առաջացել է հենց պարսկական տիրապետության ժամանակ, երբ ձևավորվում է III սատրապությունը և սերտորեն առնչվում է Պատուկա երկրանվան հետ: Կամ էլ Պատուկա երկրի անունը մ. թ. ա. VI դ. սկզբին արևելքից արևմուտք

---

[34] Ա ր ի ա ն ո ս. Ալեքսանդրի արշավանքը.— Ալեքսանդր Մակեդոնացի. Երևան, 1987, էջ 57:

[35] Նույն տեղում: Ռ ո ւ փ ո ս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը.— Ալեքսանդր Մակեդոնացի, էջ 287 (Արիանոսի և Ռուփոսի աշխատությունները հայերեն հրատարակված են մեկ գրքով):

[36] Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ. էջ 74-75:

[37] Հ ո վ ս ե փ ո ս Փ լ ա վ ի ո ս. Հրեական հնախոսություն (թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի). Երևան, 1976, էջ 55-56:

[38] ИДПСК.— ВДИ, 1948, № 3, с. 237; с. 293.

[39] The Geography of Strabo (with an English translation by Horace Leonard Jones). In Eight Volumes. London, 1969, XII, II, 7; 8, 9.

[40] Կ ո ս տ ա ն դ ի ն Ծ ի ր ա ն ա ծ ի ն. Բանակաթեմերի մասին (թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի). Երևան, 1970, էջ 168:

շարժվող մարերը պետք է տարածեին Հալիսի ոլորանի շրջանում ընկած հողերի վրա, և արդյունքում Պատուկա-Պակտյուիկե երկրի անունն ավելի ուշ հիմնավորապես դառնում է այլ երկրի անունը՝ Կատպատուկա-Կապադովկիա: Եթե Կապադովկիայի մեջ «կատ»-ը նշանակել է ստորին կամ ներքին, իսկ ամբողջ անունը Ստորին կամ Ներքին Պատուկա, ապա Պատուկա-Պակտյուիկեի համեմատությամբ նրանից այն կողմ ընկած տարածքները հենց այդպես էլ կարող էին ընկալվել և յուրացվել նվաճող մարերի կողմից: Թերևս ճիշտ է Ի. Դյակոնովը, որ Հալիսի ոլորանի ներսում ընկած հողերը համարում է հայկական կախյալ շրջաններ, որոնցից պարսկական տիրապետության ժամանակաշրջանում կազմավորվում է Կապադովկիան (III սատրապությունը) և միացվում Փոքր Ասիայի կենտրոնական այլ շրջանների հետ[41]: Չի բացառվում նաև, որ Կատպատուկա անունը առաջացած լինի դեռևս Արամի (իմա՛ Արամանի) կողմից Պատուկան նվաճելուց հետո, որից հյուսիս գտնվող հողերը կոչվեցին Կապադովկիա, որը և 585 թ. Հալիսի ճակատամարտից հետո մարերը հանձնեցին Հայաստանին: Ինչևէ, ավելի ուշ Կապադովկիա–անունը վերանում է հյուսիսային շրջաններում և ամրապնդվում հարավում: Մուշք-փռյուգիացիների մի խմբին տեղադրելով Կեսարիա-Մաժակի շրջանում, այլ բացատրություն է ստանում նաև Հերոդոտոսի հայերին փռյուգիական վերաբնակիչներ համարելու տեղեկությունը: Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշքերին, որոնք երկար ժամանակ գտնվել են Հայաստանի քաղաքական տիրապետության ծայր արևմուտքում և որոնց, ըստ պատմահայր Խորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերեն և դարձրել էր իր ժողովուրդը, հունական աշխարհը, իրոք, կարող էր համարել փռյուգիական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ և առաջ շփվել հույները: Հետևաբար, Հերոդոտոսի արմենները հենց այս մուշքերն են և խոսքը սոսկ պատմական հիշողության մասին է: Հավանաբար, Պատուկա-Պակտյուիկեն, որ տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և Հերոդոտոսի մոտ (I,72.) հիշատակված է որպես Կիլիկիա, հենց նույն Կիլիկիա անունով էլ հանդես է գալիս Ստրաբոնի կամ Պտղոմեոսի մոտ որպես Կապադովկիայի ստրատեգիաներից մեկը[42], որը ծնունդ էր առնում հին ժամանակներից: Սակայն Պակտյուիկեն որպես երկիր ավելի մեծ էր, քան Կիլիկիա ստրատեգիան: Մեր կարծիքով, պարսից «արքայական ճանապարհը» Կապադովկիայի մի որոշակի հատվածում (իմա՛ Պատուկա-Պակտյուիկե – Խ. Հ.) ունեցել է հետևյալ երթուղին. Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն մինչև Մարաշ: Մարաշն արդեն Կիլիկիայի մեջ էր մտնում, որտեղից, նկատի ունենալով ճանապարհի տվյալ հատվածի շուրջ 90 կմ երկարությունը, կհասնենք Զևդմա, որտեղ Եփրատը նավարկելի է, և այդպիսով, իրոք, Եփրատը կլինի սահման Հայաստանի և Կիլիկիայի միջև:

Այժմ տեսնենք, թե Եփրատից արևելք՝ Հայաստանում, ինչ երթուղի պետք է ունենար ճանապարհը: Ուսումնասիրողների կարծիքով, Հայաս-

---

[41] И. М. Дьяконов. История Мидии. М. – Л., 1956, с. 356 и с. 337 карта.

[42] Страбон, XII, I,4 XII, II,7. Claudii Ptolemaei Geographia. e codicibis recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Mullerus. voluminis primi. pars secunda. Parisiis,1901,VI,14.

տանը և Մատիենեն սահմանակցել են Ջեզիրե-Իբն-Օմարի մոտ[43], Վանա լճից հարավ[44]: Մեր կարծիքով, Արմենիան և Մատիենեն սահմանակցում էին մի այնպիսի շրջանում, որտեղից Տիգրիսը և դրանցից հետո հաջորդաբար նշված Մեծ ու Փոքր Զաբերը և Գյունդեսը կարելի էր նավով անցնել: Հերոդոտոսը նշում է չորս նավարկելի գետեր. սա ցույց է տալիս ինչպես այդ գետերի ընդհանրապես նավարկելի լինելը, այնպես էլ այն չորս գետանցները, որոնցով հաջորդաբար պետք է շարունակվեր ճանապարհը:

Գյունդեսից ճանապարհը տանում էր հարավ, դեպի Խալա և այնուհետև Զադրոսի դռներով մինչև Շոշ: Ի նկատի ունենալով աշխարհագրական աեղագրությունը, անկասկած է, որ հիշյալ վկայության մեջ Մատիենեն հենց Ասորեստանն է, որը մ. թ. ա. V դ. վերջում արդեն կոչվում է Մեդիա[45], հավանաբար, այն պատճառով, որ Ասորեստանի կործանումից հետո Հյուսիսային Միջագետքն անցել էր Մարաստանին: Ռուփոսը դրում է, որ «Հայկական լեռների մոտ երկու գետերը (Եփրատը և Տիգրիսը – Խ. Հ.) իրարից ամենաշատը հեռանում են 2500 ասպարեզ: Այդ նույն գետերը, մտնելով մարերի և կորդվացիների մարզերը, սկսում են որոշ չափով մոտենալ իրար, և որքան հեռու են գնում, այնքան իրենց միջև սկսում են թողնել ավելի ու ավելի քիչ տարածություն: Նրանք ամենաշատը մոտենում են այն հարթավայրում, որը տեղաբնակներն անվանում են Միջագետք, երկու կողմից սահմանափակելով այդ տարածությունը»[46]: Հայկական լեռները համապատասխանում են Մասիոն լեռներին, իսկ կորդվացիների և մարերի մարզերով կարող էր հոսել միայն Տիգրիսը, ուրեմն Մատիենե երկիրն այստեղ նույնպես հիշատակվում է որպես մարերի մարզ: Կարևոր է ընդգծել, որ Հայաստանից Մատիենե մտնելու համար Հերոդոտոսը չի նշում Տիգրիսի գետանցման մասին, իսկ դա ցույց է տալիս, որ Մատիենե-Ասորեստանը տարածվել է Տիգրիսի երկու՝ և՛ աջ, և՛ ձախ ափերին: Մեր կարծիքով, «արքայական ճանապարհի» Մատիենե-Ասորեստանով անցնող հատվածը պետք է ձգվեր Տիգրիսի և Արևելյան Խաբուրի միախառնման վայրից հարավ տարածվող շրջանից, որտեղից Տիգրիսը, ապա նաև Մեծ ու Փոքր Զաբերը և Գյունդեսը, հարմար են և՛ նավարկման, և՛ գետանցման համար: Նման երթուղու սահմանագծման դեպքում Տիգրիսից (Արևելյան Խաբուրի հետ միախառնման շրջանից) արևմուտք ընկած հողերը՝ սկսած Միդդոնիա-Մծբինից, պետք է տեսնել Հայաստանի կազմում, քանի որ «արքայական ճանապարհը» բուն Հայաստանում Տիգրիսը չի հատել: Հ. Մանանդյանի ուղեգծած ճանապարհի դեպքում (Մալաթիայից Խարբերդի դաշտի միջով դեպի Տիգրիս գետն Ամիդ-Դիարբեքիրի մոտ և այստեղից դեպի այժմյան Ջեզիրե, որը գտնվել է, հավանորեն, մատիենների երկ-

---

[43] Я. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до. н. э. — XV в. н. э.). Труды, т. VI, Ереван, 1985, с. 15.

[44] Գ. Խ. Սարգսյան. Ուրարտական տերությունը և հայերը.– «Ուրարտու-Հայաստան», Երևան, 1988, էջ 68, Նույնի՝ Պատմահայր Հերոդոտոսը.– Հերոդոտոս, էջ 573:

[45] Քսենոփոն. Անաբասիս, էջ 50:

[46] Ռուփոս, նշվ. աշխ., էջ 371:

րում[47]) այն մի քանի անդամ Հայաստանում կհատեր Տիգրիսը. դա հակասում է Հերոդոտոսի վկայություններին, քանի որ ճանապարհը Տիգրիսը հատել է Ասորեստանում:

Որ Ասորեստանի հյուսիսային որոշ շրջաններ մտել են Հայաստանի մեջ, կարելի է ցույց տալ հենց Բեհիստունի արձանագրության տվյալներով: Այսպես, ապստամբները ճակատամարտերից մեկը պարսիկների դեմ տալիս են Ասորեստանի Իզալա վայրում[48]: Բ. Հարությունյանը կարծում է, որ ապստամբները ոչ թե նախահարձակ են եղել, այլ կռվել են (քաղաքական առումով) հենց Հայաստանի սահմաններում[49]: Այս ենթադրությունը հաստատվում է արձանագրության աքքադերեն տարբերակի տվյալներով, որտեղ Իզալան ուղղակիորեն հիշատակվում է Ուրաշտուի (իմա՛ Հայաստանի) կազմում՝ առանց Ասորեստանի հետ կապելու[50]: Սա նշանակում է, որ Իզալան Հայաստանի վայրերից մեկն է: Անկախ այն հանգամանքից, թե Իզալան Հյուսիսարևմտյան Միջագետքի որ մասում կտեղադրվի, հաստատ է, որ «արքայական ճանապարհը» կարող էր անցնել Միջագետքի՝ Հայաստանին անցած այն հատվածով, որն ուներ միակ հարմար երթուղին (տե՛ս ստորև) այդ շրջանում և, բացի այդ, ճանապարհի երկարությունը (56½ փարսախ = շուրջ 350 կմ) միայն այդ գծով կարող էր անցնել:

Մի շարք տվյալներ գալիս են ապացուցելու, որ Միջագետքի հյուսիսարևմտյան շրջանները դեռևս մ. թ. ա. VII դ. վերջերից արդեն գտնվել են (քաղաքական առումով) Հայաստանի մեջ: Հենվելով «Գեդգի ժամանակագրության» վրա, կարելի է ցույց տալ, որ Հայաստանը հարավային ուղղությամբ ծավալվել է: Այսպես, մ. թ. ա. 609 թ. հունիս – հուլիս ամիսներին Խառանում պաշարված իր կայազորին օգնության չտապող Նաբոպալասարի մասին «ժամանակագրության» մեջ ասված է. «Царь Аккада *(Նաբոպալասարը)* на помощь войскам своим пошел, бой (?) [дал (?), в страну] Ицалла поднялся и многочисленные горные селения [разрушил], их [xxx] сжег огнем. В то время войска [xxxxxxxxxxxx] до области города Урашту [по]шли, в с[тране(?)] x [xx] их разграбили, гарнизон, который царь [xx в них(?) поставил, высе]лили и [xxxx] поднялись [xx]. Царь Аккада в свою страну вернулся»[51]. *Մ. թ. ա. 608 թ. դեպքերի մասին ասվում է.* «Год 18-й Набопаласара, в месяце улуле, царь Аккада войска свои ополчил, вдоль Тигра пошел и в горы Бит-Ханунии, области страны Урашту, поднявшись, селения сжег огнем, добычу многочисленную захватил; в месяце тебете царь Аккада в страну свою вернулся»[52].

---

[47] Հ. Մանանդյան. Քննական տեսություն..., էջ 64.

[48] R. G. Kent. Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 124.

[49] Բ. Հ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի..., էջ 71:

[50] F. Malbran-Labat. La version akkadienne de l'inscription trinlingue de Darius a' Behistun. Roma, 1994, p. 98, 114.

[51] И. М. Дьяконов. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей. — ВДИ, 1981, №2, с. 38.

[52] Նույն տեղում, էջ 39:

Բ. Հարությունյանն իր աշխատություններից մեկում, քննելով Մովսես Խորենացու հաղորդած տվյալները, կատարում է ուշագրավ ենթադրություններ, որոնք վերաբերում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև Առաջավոր Ասիայի պատմությանը[53]: Հիմնվելով հեղինակի ուսումնասիրության արդյունքների վրա, փորձենք «Գեղդի ժամանակագրության» և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի համեմատական վերլուծության հիման վրա քննության առնել որոշ հարցեր:

Համաձայն Բ. Հարությունյանի, Խորենացու Արամ Նահապետը նույնանում է ուրարտական արձանագրությունների Էրիմենա (իմա՛ Արամանի) թագավորի հետ, որը «Կյուրոպեդիա»-ի մեջ հիշատակվող արմենների, այսպես կոչված, «անանուն» թագավորն է: Անշուշտ, Արամանի անունը հունարեն արտասանվելու էր Ἀραμανί՛ος, որն էլ վերածվելու էր Ἀρμε՛νιος-ի՝ պատճառ դառնալով հայերին հարևանների կողմից տրված «արմեն» էթնոնիմի հետ շփոթի[54]: Քննելով Խորենացու տեղեկություններն Արամի մասին, Բ. Հարությունյանը ցույց է տալիս Արամի (իմա՛ Արամանի) իրական պատմական անձ լինելը, որը, իրոք, ծավալել է արտաքին ակտիվ քաղաքականություն՝ ընդարձակելով Հայաստանի սահմանները գրեթե բոլոր ուղղություններով և կառավարել է մ. թ. ա. 631-608 թթ.: Մենք կիսում ենք հեղինակի այն իրավացի միտքը, որ «Գեղդի ժամանակագրության» Ուրաշտուն այլևս Վանի թագավորությունը չէ, այլ Էրիմենայի պետությունը, որի հետ այդպես էլ հայտնի չէ Բաբելոնի թագավորը բախում ունեցավ, թե՞ ոչ: Հեղինակի ենթադրությամբ, Նաբոպալասարը Իղալայի կամ Իծալայի շրջանում կռվում է ասորեստանցիների դեմ[55]: Սակայն մենք ավելի հակված ենք ընդունելու Ի. Դյակոնովի տեսակետը, ըստ որի Իծալայում Նաբոպալասարը չէր կարող կռվել Աշշուրբանիպալի և եգիպտական զորքի դեմ, քանի որ ավելի ուշ նրանք հայտնվում են Կարքեմիշում: Ուստիև, հիմք ընդունելով Բ. Հարությունյանի քննությունը, հավանական է ենթադրել, որ Իղալայում Նաբոպալասարը իրականում հարձակվել է Արամի (իմա՛ Արամանի) վրա, որը, ըստ հեղինակի, Հյուսիսային Միջագետքը պետք է նվաճած լիներ 625 թ. հետո[56]: Փաստորեն, Բաբելոնը՝ մի կողմից, և Մարաստանը՝ մյուս կողմից, փորձում էին զսպել Հայաստանի հեռուն գնացող քաղաքական նկրտումները: Ըստ երևույթին, հայոց թագավորին անհանգստացրել էր Ասորեստանի կործանումը, Նինվեի ավերումը, և նա փորձում է հետ կանգնել իր ավագ դաշնակցից: Հավանաբար, Բաբելոնն օգտվել էր հայերի ապստամբությունից Մարաստանի դեմ և նախահարձակ եղել՝ փորձելով Հայաստանից նվաճել վերջինիս կողմից գրված Ասորեստանի նախկին տիրույթները: Բաբելոնը երկու անգամ (մ. թ. ա. 609 և 608 թթ.) արշավում է Հայաստանի դեմ՝ Իղալա և Բիթ-Խանունիա: Ի. Դյակոնովի կողմից Բիթ-Խանունիայի նույնացումը Խնուսին

---

[53] Բ. Հ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի..., էջ 73–75:

[54] Նույն տեղում, էջ 24, 73:

[55] Նույն տեղում, էջ 74:

[56] Նույն տեղում, էջ 62:

ակնհայտորեն անհաջող է[57]*: Դատելով արձանագրությունից, թերևս, արշավանքը ծավալվել է Տիգրիսի ավազանում: Արձանագրությունում պարզորոշ ասվում է, որ Աքքագի թագավորը, ընթանալով Տիգրիսի երկարությամբ, հասնում է Բիթ-Խանունիայի լեռները: Բիթ-Խանունիան չի կարող նույնանալ Խնուսի հետ նաև այն պատճառով, որ արձանագրությունում չի հիշատակվում Արածանին, որը հայտնի էր ասսուրական սեպագիր տեքստերում*[58]*: Մյուս կողմից էլ, հազիվ թե Մարաստանը հանդուրժեր, որպեսզի Բաբելոնն այդչափ խորանար իր կրտսեր դաշնակցի բուն տիրույթների մեջ:*

Չի բացառվում, որ, նկատի ունենալով Արամանի-Էրիմենայի ռազմական մեծ կարողությունները, Բաբելոնը և Մարաստանը համաձայնեցրել են իրենց ծրագրերը և գործել Հայաստանի դեմ տարբեր ուղղություններով: Ինչևէ, ո՛չ Նաբոպալասարը, ո՛չ էլ Կիաքսարը անմիջականորեն չեն բախվել Արամի (իմա՛ Արամանի) անմիջական հրամանատարության տակ գտնվող զորքերի հետ, և հայոց թագավորի անունն այդ պատճառով չի հիշատակվում արձանագրությունում: Վերևում բերված վկայության մեջ կա մի կարևոր հանդամանք. Կիաքսարը Ուրաշտուում (իմա՛ Հայաստանում) կռվում է ինչ-որ թագավորի կայազորի դեմ դաղթեցնելով նրան: Թե ո՞ր թագավորի մասին է խոսքը՝ «Աքքագի», «Ուրարտուի՞», «Ասորեստանի՞», Ի. Դյակոնովի համար պարզ չէ: Մեր կարծիքով, այստեղ, բնականաբար, խոսքը կարող է միայն վերաբերել հայոց թագավոր Արամանի-Էրիմենային:

Բիթ-Խանունիան հնարավոր է նույնացնել Սարդոն II-ին ուղղված նամակներից մեկում հիշատակվող Ուրարտուի Կանիուն գավառի հետ[59]*, որը տեղադրված է ուկկիացիների դիմացի նահանգի և Ալզիի միջև: Ուկկիացիները բնակվել են Ջուդի-դաղից արևելք, իսկ Ալզին հայկական Աղձնիքն է: Ուրեմն Կանիունն աշխարհագրորեն համապատասխանում է Կորդուքին: Ն. Ադոնցի կարծիքով, Կանիունը հիշեցնում է Քանան՝ Ջուդիի շրջանի բնակավայրերից մեկը, որը Սեննաքերիբը հայտարարում է, թե նվաճել է Տիմուրիի (հայկ. Տմորիք) և Աշուր-ռիսուայի Կիպշու (Գեֆշ) նահանգի հետ*[60]*: Քանան և մյուս բնակավայրերը գտնվել են Կուտմուխիի սահմանին*[61]*:*

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իր երկրորդ հարվածը Նաբոպալասարն ուղղել էր արդեն Կորդուքի վրա: Ընդ որում, ինչպես կարելի է

---

[57] *Ի. Դյակոնովը մ. թ. ա. 611 թ. դեպքերին վերաբերող արձանագրության աղճատված հատվածներից մեկը վերականգնում է Շուպրիա, որը կասկածելի է* (И. М. Дьяконов. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей, с. 34—64).

[58] D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia. Vol. I. Chicago, 1926, № 584, 604.

[59] И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (*այսուհետև՝* АВИИУ).— ВДИ, 1951, № 2—3, № 50 (4).

[60] *Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 212.*

[61] D. D. Luckenbill. Ancient records.... Vol. II. Chicago, 1927, N 244, 295. *Հեղինակը Կուտմուխին նույնացնում է Կոմմագենեին, որը սխալ է. տե՛ս նաև* АВИИУ, № 57, 58.

տեսնել արձանագրության բովանդակությունից, արշավանքը կրել է ավարառուական բնույթ: Եթե նույնիսկ Բաբելոնը գրավել էր Իզալան և Բիթ-Խանունիան, ապա Ասորեստանի ժառանգությունը բաժանելուց հետո Հյուսիսային Միջագետքն անցնում է Մարաստանին, իսկ Միջագետքի հյուսիսարևմտյան շրջանները, թերևս, կրկին վերադարձվել են Հայաստանին, ինչը և հաստատվում է Աքեմենյան շրջանի տեղեկություններով:

Ինչպես վկայում է Մովսես Խորենացին, Կորդուքը մտել է Հայաստանի մեջ, քանի որ Արամը շարժվում է դեպի Ասորեստանի դաշտը Կորդուքի միջով, այսինքն՝ Կորդուքն արդեն Հայաստանի մեջ է: Եթե նկատի ունենանք, որ պատմահոր հաղորդմամբ նախահարձակ է եղել Բարշամը՝ «Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. դտանէ և անդ զոմն ասլականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն, յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա ճակատու պատերազմի ի գիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումն ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի գինակրաց նորա պատահեալ մեռանի...»[62], ասա հնարավոր է, որ Բարշամի անվան տակ թաքնված Նաբոպալասարը, այսուհանդերձ, վերջին հաշվով, Միջագետքի հյուսիս-արևմուտքը հարկադրված թողել է Արամին, քանի որ Նաբոպալասարը և՛ Իզալա, և՛ Բիթ-Խանունիա կատարած արշավանքներից հետո չի նշում, թե գրավել է այդ շրջանները, այլ խոսում է միայն ավերի ու թալանի մասին: Ըստ էության, Արամը կամ գուցե նրա հաջորդը (Հրաչյա-Ռուսա III-ը մ. թ. ա. 608-586 թթ.[63]) պետք է, որ գրված լինեին Ասորեստանի կողմերը, որպեսզի նման կացությամբ Հայաստանը մտներ նախ Մարաստանի, ապա Աքեմենյան Իրանի տիրապետության մեջ: Որ Նաբոպալասարը իր երկրորդ արշավանքն ուղղել է հենց Կորդուքի վրա, կարելի է ենթադրել Խորենացու նաև այն տեղեկությունից, որ Արամն Ասորեստանի կողմերը հանձնում է Կադմոսի տան հաջորդներին[64], այսինքն՝ Բիթ-Խանունիան աշխարհագրորեն Կադմեա տունն է:

Անտիկ աղբյուրների վկայությամբ արմենները հարավում դուրս էին եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից: Ստրաբոնի վկայությամբ արմենները հասել էին մինչև Կալաքենե և Ադիաբենե[65]: Նա նույնը կրկնում է մեկ այլ հատվածում, որ Արմենոսի ուղեկիցներից ոմանք բնակություն են հաստատում Ակիլիսենեում, որն առաջ ենթարկված էր Ծոփքի իշխանությանը, իսկ ոմանք՝ Սիսպիրիտիսում մինչև Կալաքենե և Ադիաբենե, որ գտնվում էին Հայկական լեռնաշխարհից դուրս[66]: Կալաքենեի տեղը ենթադրվում է այժմյան Խաբուր-սուի հարավ-արևելքում, սրա և Մեծ Զար

---

[62] Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ժդ:

[63] Բ. Հ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի..., էջ 84:

[64] Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. ժդ:

[65] The Geography of Strabo, XI, IV, 8.

[66] Նույն տեղում, XI, XIV, 12:

գետի միջև, իսկ Ադիաբենեն գտնվում էր Կալաքենեից հարավ՝ հյուսիսային Ասորեստանում[67]: Պատահական չէ, որ Ստրաբոնը մարերին, հայերին և բաբելոնացիներին համարում է Ադիաբենե երկրում ապրող ցեղերից ամենաբազմաքանակը[68]: Սա նշանակում է, որ հայերը հին ժամանակներից սկսած զգալի թիվ են կազմել երկրի բնակչության մեջ: Մինչև Կալաքենե և Ադիաբենե հայերի հասնելու մասին վկայում է նաև պատմիչ Թովմա Արծրունին. «Քսերքսեսն ու յուրայինները վերադարձան և նվեր ստացան (Կյուրոս Մեծի կողմից) Տմորիք ամրոցն ու Նինվեի գետեզերքը»[69]: Ըստ Բ. Հարությունյանի, այս տեղեկության մեջ խոսքը վերաբերում է Արտաշես Ա-ի կողմից Տմորիքը գրավելուն[70]: Մեր կարծիքով, Արտաշես Ա-ի դեպքում կարող ենք ենթադրել Տմորիքի վերանվաճման մասին, քանի որ մինչև IV դ. վերջերը, ամենայն հավանականությամբ, Տմորիքը պետք է լիներ Հայաստանի անբաժանելի մասը: Զմոռանանք նաև, որ Արտաշես անունը Հայաստանում վկայված է մ. թ. ա. V դ. Արտոքմես-Արտուխաս ձևով[71]: Թովմա Արծրունին մեկ այլ տեղում «Նինվեի դետեզերքի» փոխարեն օգտագործում է Նինվեի կողմերը[72], այն է՝ Ասորեստանի կողմերը: Տմորիքը գտնվել է Արևելյան Խաբուրի վերին հոսանքի շրջանում, իսկ «Նինվեի գետեզերքի» տակ, հավանաբար, պետք է հասկանալ Տիգրիսի՝ Արևելյան Խաբուրի հետ միախառնվելու շրջանը: Բ. Հարությունյանն ուշադրություն է դարձնում Փավստոս Բուզանդի մի շատ հետաքրքիր տեղեկության վրա, որ Պապ թագավորը Վազես կայսրից պահանջում է Կեսարիան, Ուռհան և ևս տասը քաղաքներ, որը, ամենայն հավանականությամբ, տեղի չի ունեցել: Կարևորը, սակայն, այն է, որ հայ ժողովրդի պատմական հիշողությունը նշված քաղաքներն իրենց շրջակա տարածքներով համարել է հայկական երկիր, որի նկատմամբ, ժողովրդի ազգային մտածելակերպը ներկայացնող պատմիչի կարծիքով, Պապ թագավորը կարող էր հավակնություններ ունենալ: Շարունակելով իր միտքը, Բ. Հարությունյանն ընդգծում է. «Հայոց պատմության մեջ բացառվում է որևէ այլ ժամանակաշրջան, որ հայերին հաջողված լինի իշխել հիշյալ տարածքներին, ուստի թե՛ Կեսարիայի շրջանը և թե՛ Ուռհան կարող էին գրավված լինել VII դարի վերջին երեսնամյակում»[73]: Որ Ասորեստանի որոշ շրջաններ (հյուսիսում) մտել են Հայաստանի մեջ, կարելի է եզրակացնել Հերոդոտոսի այն տեղեկությունից, որտեղ խոսվում է Աքեմենյան Պարսկաստանի IX

---

67 Հ. Մանանդյան. Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ.– Երկեր. հ. Ե. Երևան, 1984, էջ 292:

68 Strabo, XVI, I, 19.

69 Թովմա Արծրունի և Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց (բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վարդանյան). Երևան, 1985, էջ 67:

70 Բ. Հ. Հարությունյան. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 2001, էջ 281:

71 С. М. Кркяшарян. К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении.— "Проблемы античной истории и культуры", Ереван, 1979, с. 129—130. Տե՛ս նաև Ն. Ույնի՝ Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI–մ. թ. IV դդ.). Երևան, 2005, էջ 58, 59:

72 Թովմա Արծրունի և Անանուն. նշվ. աշխ., էջ 63:

73 Բ. Հ. Հարությունյան. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի ..., էջ 70:

նահանգի մասին. «Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից (ընդգծումը մերն է – Խ. Հ.) ստացվում էին հազար տաղանդ և հինգ հարյուր ներքինացված տղաներ. սա իններորդ նահանգն էր»[74]: Բնականաբար, Բաբելոնն այստեղ չէր կարող ընկալվել որպես Ասորեստանի մաս (հմմտ. X սատրապության հետ): Հետևաբար, սույն տեղեկության մեջ «մնացյալ Ասորեստանը» ուղղակիորեն հուշում է այն միտքը, որ Ասորեստանը, իրոք, զրկվել էր իր որոշ շրջաններից, որոնք այլ աղբյուրների հավաստմամբ մտել էին Հայաստանի մեջ: Ճիշտ է, Դարեհի դեմ ապստամբության ժամանակ Ասորեստանի մի շրջանը՝ Արբելա կենտրոնով, մտել է Մեդիայի մեջ[75], սակայն ապստամբության ճնշումից հետո այն ավելի շուտ պետք է միացվեր IX սատրապությանը:

Սատրապական Հայաստանի հարավային սահմանագծի ճշգրտման համար կարևոր են նաև ներքոհիշյալ տեղեկությունները: Արիանոսը հաղորդում է, որ «Ալեքսանդրը Թապսակոսից շարժվում է մայրցամաքի խորքը, դեպի այսպես կոչված Միջագետք. Եփրատը և Հայաստանի սարերը մնացին ձախ կողմում»: Մեր կարծիքով, «Հայաստանի սարերի» տակ պետք է հասկանալ Մասիոն լեռները, որոնք, ըստ Ստրաբոնի, մտնում էին Տավրոսի մեջ. «Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները (իմա՛ Պարաքոաթրաս). իսկ հարավայինը, Եփբատից այն կողմ, Կապադովկիայից և Կոմմագենեից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որ բաժանում է Ծոփքը և Մնացյալ Հայաստանը Միջագետքից. ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոն լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևը: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում է Նպատ. այստեղ, լեռան հարավային կողմերում գտնվում են Տիգրիսի ակունքները»[76]: Ինչպես տեսնում ենք՝ Մասիոնը և Գորդյան լեռները համարվել են Տավրոսի ճյուղերը: Հաջորդ տեղեկության մեջ Արիանոսը գրում է, որ «թողնելով Տիգրիսի ափերը, Ալեքսանդրն անցավ Ասորեստանով. նրա ձախ կողմում Գորդիոնյան լեռներն էին, աջից՝ Տիգրիսը»[77]: Այս հաղորդման մեջ նշվող Գորդիոնյան լեռները (իմա՛ Կորգվաց լեռներ) տարածվել են Մասիոն լեռներից արևելք: Իրականում Մասիոն լեռները Կորգվաց լեռների շարունակությունն են: Հայաստանի հարավային սահմանի ճշգրտման համար Արիանոսը հայտնում է մի շատ կարևոր տեղեկություն. «Դարեհը ճակատամարտի դաշտից (Գավգամելայի) անմիջապես սլացավ Մարաստան, ճանապարհ ընտրելով հայկական լեռներով»[78]: Իսկ Պլուտարքոսը գրում է. «Ամբողջ հարթավայրը (Գավգամելայի – Խ. Հ.) Նիփատեսի և Գորդիենյան լեռների միջև լուսավորված էր բարբարոսական զորքի կրակներով...»[79]: Նիփատեսի լեռները, իրոք, գտնվել են Հայաստանում՝ Նպատական լեռներ (Զողա) անունով: Սակայն Պլուտարքոսն աշխարհագրական առումով ավելի մեծ բովանդակություն է

---

[74] Հերոդոտոս. III, 92:

[75] R. G. Kent. Նշվ.աշխ., էջ 124:

[76] Սարաբոն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան). Երևան, 1940, էջ 43-45:

[77] Արիանոս. Նշվ. աշխ., էջ 96:

[78] Նույն տեղում, էջ 107:

[79] Плутарх. Александр. XXXI. с. 394. Избранные жизнеописания, т. II. М., 1987.

տալիս Գորդիենյան և Նպատական լեռներին՝ դրանք տարածելով ավելի հարավ, քանի որ Նպատական լեռներից հարավ գտնվել են Դասնի լեռները: Ուրեմն, Դարեհ III-ը փախել է Դասնի և Նպատական լեռներով դեպի Մարաստան, որի հետ Հայաստանի սահմանը, ամենայն հավանականությամբ, կազմել են Կոհ-ի-Նիխորական լեռները, որոնք, մեր կարծիքով, նույնպես ընկալվել են որպես Նպատի լեռներ: Ստրաբոնի Նիբարոսը[80] Հ. Մարկվարտը նույնացրել է Կոհ-ի-Նիհորական լեռներին[81]: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու, Դարեհն Արբելայի ճակատամարտում պարտվելուց հետո՝ փախչելով դիմեց դեպի վերին սատրապությունները[82]: Վերին սատրապություններից առաջինը, անկասկած, Հայաստանն էր, որն անցնելուց հետո Դարեհը մտնում է հաջորդ վերին սատրապությունը՝ Մարաստան:

Սատրապական Հայաստանի հարավային սահմանի վերաբերյալ տեղեկություններ են հազորդում նաև հայկական աղբյուրները: Ըստ Մովսես Խորենացու, Արամ Նահապետը (իմա՛ Արամանի) Նյուքար Մադեսին սպանելուց հետո նրա երկիրը՝ մինչև Զարասպ լեռը, հարկատու դարձրեց «մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի»[83]: Նինոսի հիշատակվելը (Շամիրամ-Շամուրամաթի ամուսին Շամշի-Ադադ V-ն է) ցույց է տալիս, որ տվյալ վկայության մեջ Արամ Նահապետի կերպարի տակ որոշակիորեն թաքնված է նաև Ուրարտուի Արամե թագավորը, իսկ Նյուքար Մադեսը նույնանում է մ. թ. ա. VII դ. II կեսերին գործած Հերոդոտոսի սկյութների թագավոր Մադյուեսի՝ Պրոտոթյուեսի որդու հետ[84]: Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացու մոտ Զաբասպը Հայաստանի հարավային սահմանն է: Հետաքրքիր է Թովմա Արծրունու տեղեկությունը՝ կապված Վահրամ Զուբինի կամ Միհրևանդակի հետ: Պարսիկ զորավար Վահրամ Միհրևանդակը, որն ապստամբել էր Խոսրով II Ապրվեզի դեմ, հայ իշխաններին իր կողմը դրավելու համար խոստանում է վերականգնել Հայոց թագավորությունը իր նախկին սահմաններում. հյուսիսում մինչև Կովկաս և Աղվանից դուռը, և Ասորիքի կողմից՝ Արվաստանը, Մրծուինը և Նոր Շիրականը մինչև տաճիկների սահմանը և արևմուտքում մինչև Կապադովկիայի Կեսարիան, և ինքը չի անցնի Զաբասպից մյուս կողմ[85]: Հետաքրքիր է, որ, ըստ պարսիկ զորավարի, Հայաստանի սահմաններն այդպիսին են եղել նախնյաց ժամանակ: Անուղղակի որոշ փաստեր վկայում են, որ Հայաստանի հարավային սահմանն Աքեմենյան տիրապետության շրջանում, իրոք, անցել է Զարասպի տարածքով: Պլինիոսի հիշատակած օրոնտներ ցեղն իրավացիորեն տեղադրվում է Ռևանդուզի

---

80 S t r a b o, XI, XIV, 2, XI, XIV, 14.

81 Հ. Մ ա ր կ վ ա ր տ. Պարսկահայք նահանգը.– ՊԲՀ, 1961, № 2, էջ 212, 226:

82 Դ ի ո դ ո ր ո ս Ս ի կ ի լ ի ա ց ի. Պատմական գրադարան (թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի). Երևան, 1985, էջ 97:

83 Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, Գիրք Ա, գլ ԺԳ:

84 Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի ..., էջ 26,60:

85 Պատմութիւն Սեբէոսի (աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի). Երևան, 1979, էջ 78, նաև էջ 53: Սեբեոսի Զարասպը ուսումնասիրողները ուղղում են «ղԱրասխ» (տե՛ս Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 328), որը երկու դեպքում էլ ցույց է տալիս, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայաստանի հարավային սահմանը հասել է մինչև Ուրմիո լճի հարավարևմտյան ափերը:

շրջանում[86]: Հ. Մանանդյանի կարծիքով, այդ օրոնտների (ըստ Ս. Երեմյանի՝ ճիշտ ընթերցումն է օրոանդներ) հետ պետք է, որ կապ ունենա Վասալուրականի գավառներից մեկի՝ Արուանթունիքի (Երուանդունիքի) անունը[87]: Այդ գավառը կոչվում էր նաև Հայոց ձոր և գտնվում էր Վան քաղաքից հարավ՝ Հայոց ձոր (Խոշաբ) գետի հովտում: Ըստ Հ. Ռաուլինսոնի, օրոնտների անունը պահպանված է այժմյան Ռևանդուզ տեղանվան և քրդական ռավանդի ցեղի անունների մեջ (Օրոնտ>Երվենտ>Ռեվենտ)[88]:

Ստորև փորձենք առաջադրել Բեհիստունի արձանագրության Զուզահյա, Աուտիյարա, Տիգրա տեղանունների տեղադրությունների մեր տեսակետները: Զուզահյան, մեր կարծիքով, թերևս Սասուն գավառն է, որի բերդերից մեկը կոչվել է Զուզա-Սուսանց[89]: Վանում հայտնաբերված Մենուա արքայի արձանագրություններից մեկում հիշատակվում է Ուսուսուանի երկիրը՝ Արսլուլյանի քաղաքով նվաճելու մասին: Ուսուսուանիի հետ հիշատակվում են Նիրիբայի դաշտի երկիրը՝ Կալիբիլիանի քաղաքով, Տուշուրիեխի ցեղի երկիրը՝ Խուլմերունի քաղաքով, Էրունի քաղաքը, Ուլիբանի երկիրը՝ Կիրսլունունի քաղաքով[90]: Ն. Ադոնցն Ուսուսուանի անունը կապում է Սասունի հետ: Նրա լեզվաբանական համեմատությունը հաստատվում է նաև աշխարհագրական տեսակետից: Ուսուսուանիից առաջ հիշատակվող Կալիբիլիանի քաղաքը փորձում է մոտեցնել Զիբենե-սուի ակունքներում գտնվող Բիլ-Կալենին, իսկ Ուսուսուանիից հետո հիշատակվող Խուլմերունի քաղաքը ասսուրական Կուլլիմերին է, հայկական Ք-(ու) ղիմարը[91]: Փաստորեն, Կալիբիլիանիի և Խուլմերունիի միջև գտնվող Ուսուսուանի երկիրը միանշանակ Սասունի շրջանն է: Հենց այս Ուսուսուանի երկիրը (ու-ի անկումով) նույնացնում ենք Բեհիստունի արձանագրության Զուզահյայի հետ: Համեմատության համար նշենք, որ սեպագիր արձանագրություններում հիշատակվում են տեղանուններ, որոնք գրվում են և՛ ս, և՛ զ ձևերով: Օրինակ, Սուսուկու-Զիզակ, Զիկիրտու-Սագարտիա:

---

86 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 309: Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայկական առաջին պետական կազմավորումները (VII–VI դդ. մ. թ. ա.).– ՊԲՀ, 1968, №3, էջ 112:

87 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 309· Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 112:

88 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 309· Պերդամոն քաղաքից 12 կմ հեռավորության վրա գտնվող Բորիաջիք վայրում գտնված արձանագրությունում Արմենիայի սատրապ, իսկ հետո իրբև Մյուսիայի սատրապ Օրոնտես-Երվանդը (մ. թ. ա. V-IV դդ.) բակտրիական ծագում ունի (Տե՛ս Ժ. Գ. Ի լ ի ր ե կ յ ա ն. Երվանդունիների ծագման հարցի շուրջը.– ՊԲՀ, 1971, №2, էջ 113-114: Ս. Տ. Երեմյան. Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 112-113): Ինչպես արդեն նշվել է պատմագիտական գրականության մեջ, Բակտրիա քաղաքը և Բակտրիանա երկիրը հայտնի են եղել նաև Զարիասպա անունով: Վերջինս էլ աղերսակցվում է Հայաստանի Զարասպ լեռին, որը գտնվում է Արդինի-Մուսասիր երկրում, Կելիշին լեռանցքից հարավ և ունի 3497 մ բարձրություն: Նրա ժամանակակից անունն է Սիահ-կուհ (տե՛ս Ս. Տ. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 51, Ն ո ւ յ ն ի՝ Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 113):

89 Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս ա տ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 2, Երևան, 1988, էջ 323:

90 Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 64.

91 Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, էջ 199:

Եթե ճիշտ է Շաշնու-Սասուն անցումը[92], *ապա չենք բացառում, որ շ>ղ անցման գեպքում Շաշնուն կապ ունենա նաև Զուզահայքի հետ: Այս առումով կարելի է համեմատել Զազդիսա-Շաշդիսսա քաղաքի անունը*[93]: *Աուտիյարա տեղանունը, մեր կարծիքով, համապատասխանում է ասսուրական արձանագրություններում հիշատակվող Ուդա-Ուդու քաղաքին*[94], *որը Ն. Ադոնցը նույնացնում է բյուզանդական Χοὐδδαν-ին ներկայիս Մազարտայի շրջանում*[95]: *Ղ. Ալիշանը հիշատակում է Ութա-Ոտայեցվոց երկիրը, որը տեղադրում է Դիարբեքիրի նահանգում, Տիգրիսի ձախակողմյան Քաղիրթ վտակի հովտում*[96], *և որը համապատասխանում է հետագայի Սլիվանի գավառակին, այն է՝ Աղձնիք աշխարհի Նփրկերտ գավառի տարածքին: Միգուցե, Ութա-Ոտայեցվոց երկիրը կարելի է կապել Աուտիյարայի հետ, բայց մեծավաստակ գիտնականը չի նշում իր աղբյուրը: Արդյոք Աուտիյարա-Ութա անունը կարելի՞ է տեսնել օրտա ժողովրդի անվան մեջ, որը VI դ. ապրում էր Անդիտենե-Անձիտ գավառում, եթե ընդունենք, որ «ր»-ն այստեղ աճական է: Եթե համեմատենք Վահումիսայի առաջին (Իղալա) և երկրորդ (Աուտիյարա) ճակատամարտերի միջև ընկած ժամանակային մեծ տարբերությունը (առաջինը 522 թ. դեկտեմբերին, իսկ երկրորդը 521 թ. հունիսին), ապա շատ ավելի հավանական կլիներ երկրորդ ճակատամարտի վայրը փնտրել Հայաստանի խորքերում:*

Հետաքրքիր է այն իրողությունը, որ ձեռագրական կենտրոնների թվում հիշատակվում է Խոյաման՝ առանց տեղադրությունը ճշտելու[97], *թերևս այն կարող էր ծագել Հույամա ձևից, և բոլոր հիմքերը կան կարծելու, որ, ամենայն հավանականությամբ, այն աղերս ունի Ույամայի հետ: Մեր կարծիքով, Տիգրա ավանը տեղադրվում է Նոր-Շիրական երկրում, որի հետ, մեր կարծիքով, սերտորեն կապված է անվանական տեսանկյունից:*

Տիգրա տեղանունը նույնացնում ենք անտիկ աղբյուրների Ափդրիանե-Շիդրիանի[98] *հետ և համեմատում ասսուրական արձանագրություններում հանդիպող Շիգրակկա-Տիգրակկա-Սիգրիս-Սիգրինա-Տիգրիշ տեզանվան հետ, որը լայնորեն հանդիպում է Իրանի տարածքում և քննության է առնվել Է. Գրանտովսկու կողմից*[99]:

Ելնելով վերը կատարված քննությունից, կարելի է անել հետևյալ եզրակացությունները: Ամենայն հավանականությամբ, «արքայական ճանապարհը» Հայաստանում ունեցել է հետևյալ երթուղին՝ Ուռհա–Վերանշեհր–Մարդին–Մծբին, որից արևելք սկսվում էր Ասորեստան–Մատիենեն:

---

92 Հ. Կարագյոզյան. Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում). Երևան, 1998, էջ 41: Հեղինակը Ուսուսուանին կապում է Բսանքի հետ, էջ 307, ծանոթ. 11:

93 Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 50:

94 АВИИУ, № 22, 23 (III, 109).

95 Ն. Ադոնց. Նշվ.աշխ., էջ 74:

96 Ղ. Ալիշան. Տեղագիր Հայոց Մեծաց. Վենետիկ, 1855, էջ 43:

97 Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Նշվ. աշխ., էջ 768:

98 Սիգրերի (Շիգրերի) երկրի՝ Նոր-Շիրականի մասին մանրամասն տե՛ս Հ. Մանանդյան. Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 308–310:

99 Э. А. Грантовский. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с. 241—245.

Սատրապության հարավային սահմանը տարածվել է Զևգմայից արևելք, Եփրատի արևելյան ափից, ի մեջ առյալ նաև «արքայական ճանապարհի» Հայաստանով անցնող հատվածը: Մծբինից արևելք Հայաստանի հարավային սահմանը շարունակվել է Արևելյան Խաբուրի և Տիգրիսի ջրկիցի շրջանից և Դասնի լեռներով հասել Կոհ-ի-Նիհորական լեռները ու Արասխ գետը, որը Ուրմիո լիճը եզերում էր հարավից: Իսկ արևմտյան սահմանում, չնայած այն հանգամանքին, որ մ. թ. ա. V դ. Հայաստանի սատրապությունը կորցրել էր իր սևծովյան տիրույթները՝ Թերմոդոնա գետի և Յասոնի հրվանդանի միջև, Պատուկա-Պակտյուիկեն, այդուհանդերձ նրա մեջ մանում էին Գայլ և Հալիս գետերի վերին հոսանքների շրջանը, Եփրատի վտակ Կավկավա գետի հոսանքը, Կոմագենեն մինչև Մարաշ և Զևգմա:

ЗАПАДНЫЕ И ЮЖНЫЕ ГРАНИЦЫ САТРАПСКОЙ АРМЕНИИ В VI-IV вв. до н. э.

ОГАННЕС ХОРИКЯН

Резюме

В VI-IV вв. до н. э. сатрапская Армения являлась одной из крупных и богатых частей Ахеменидского Ирана. Разностороннее изучение древних источников создает возможность для историко-географических уточнений, определения ее западных и южных границ. XIII сатрапия не являлась стойкой административной единицей. Если в середине V в. до н. э. Пактиике-Кесария, черноморские владения вышли из состава сатрапии, то до падения Ахеменидской империи граница на юге оставалась почти неизменной.

THE WESTERN AND THE SOUTHERN BOUNDARIES OF SATRAPIC ARMENIA IN THE 6th-4th CENTURIES B.C.

HOVHANNES KHORIKYAN

Summary

Satrapic Armenia was one of the largest and richest parts of the Achaemenian Iran in the 6th-4th centuries B. C. The comprehensive investigation of the ancient sources gives a chance to make historical-geographical accurate definitions, clarification of its western and southern boundaries. The 13th Satrapy wasn't a stable administrative unit. If in the middle of the 5th cent. B.C. Pactyica-Caesarea, the domains of the Black Sea came out of the structure of the Satrapy, then the boundary remained nearly unchanged in the south till the fall of the Achaemenian Empire.